ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Ռաֆֆի Յովհաննիսեանը արտասահմանեան շրջագայութեան ժամանակ յայտարարել է թ, որ անհրաժեշտ է անյապաղ Լեռնային Ղարաբաղ ուղարկել ՄԱԿի միջազգային ուժեր։ Նա անհրաժեշտ է համարել համաշխարհային հասարակութեան ուշադրութիւնը, քանի որ հակառակ դէպքում մօտ ապագայում հնարաւոր է, որ Արցախում այլեւս հայ չմնայ։ Միեւնոյն ժամանակ ԼՂՀում շարունակւում է ծայր առած կատաղի առճակատումը։ Վերջին օրերին Ադրբեջանցիների յարձակումների առանցքում է յայտնուել յատկապէս Ստեփանակերտ քաղաքը, որը պարբերական ռմբակոծումների եւ յարձակումների է ենթարկւում Շուշիի, Խոջալուի, Կրկժան թաղամասի կողմից։ Արցախում առաջին իսկ ընդհարումների շրջանից սկսած օգտուելով բարձր դիրքից, Կրկժանի ադրբեջանաբնակ հատուածը մշտապէս անհանգստութեան մէջ է պահել ստեփանակերտցիներին, մի շարք դէպքերում անսպասելի յարձակումներով անակնկալի բերելով վերջիններիս եւ զգալի կորուստներ պատճառելով նրանց։ Այս նոր ընդհարումների ժամանակ, երբ Շուշին հզօրացրեց իր ռմբակոծումների թափը, Կրկժանն իր հերթին ակտիւացրեց իր յարձակումները։ Նման պայմաններում հայկական կողմն իր հերթին ձեռնարկեց մի շարք ուժեղ հակայարձակումներ։ Տուեալ գործողութիւնների եւ դրանց հետեւանքների մասին Բաքուի ռադիոն յայտնել է, որ ըստ Շուշիի շրջանի ՆԳ բաժնի պետ Վ. Բայրամովի, վերջին երկու օրերին շրջանում վիճակը եղել է ծանր, Ստեփանակերտի կողմից մշտապէս զնդակոծել է Կրկժան աւանը, ուր եղել են մեծաքիւ զոհեր եւ աւերածութիւններ։ Միայն Դեկտեմբերի 2ին այստեղ հրկիզուել է 20-25 տուն։

Դեկտեմբերի 1ին Շուշի-Ստեփանակերտ եւ Շուշի-Լաչին ճանապարհները քանիցս զնդակոծուել են հայերի կողմից։ Ասկերանի շրջանի գիւղերի կողմից հրանօթներով եւ Ալազան հրթիռներով զնդակոծուել է Շուշին։ Իրադրութիւնը Կրկժանում կտրուկ սրուել է Դեկտեմբերի 5ի կէսօրից յետոյ, երբ ադրբեջանական թաղամասում զրահամեքենայից եւ ՕՄՕՆի դիրքերից սկսել է Կրկժանի հայկական մասի եւ Հայկաւանի բնակելի տների անընդհատ զնդակոծումն ու ռմբակոծումը։ Այստեղ գտնուող հայկական սակաւաթիւ ուժերը հերոսաբար դիմադրել են թշնամու հոծ կրակին, որը տեւել է ամբողջ գիշեր։ Քսան ժամից աւելի արտաքին աշխարհից մեկուսացուած ազատամարտիկները կարողացել են դիմադրել։ Երեք կողմի բարձունքներից ռմբակոծումների տարափի տակ հայերը կարողացել են ձախողել Կրկժանի հայկական թաղերը բնաջնջելու ադրբեջանցիների փորձերը, զգալի կորուստներ պատճառելով նրանց, մեր մէկ վիրաւորի եւ հրդեհուած մի քանի տների դիմաց։ Դանդ է անցել ստեփանակերտցիների համար Դեկտեմբերի 8ի լոյս 9ի գիշերը։ Շուշիից, Կրկժանից, Մալիբեյլուից եւ Խոջալուից քաղաքի վրայ արձակուել են հարիւրից աւելի «Ալազան» տիպի հրթիռներ։ Թշնամին օգտագործել է նաեւ թնդանօթներ։ Մայրաքաղաքում վնասուել են հինգ բնակելի տներ եւ այլ շինութիւններ։ Զոհեր եւ վիրաւորներ չեն եղել։

Հինգ հրթիռներ ընկել են ԸՍտեփանակերտի զօրակայանի վրայ։ Ի պատասխան զինուորականները զրահամեքենաներից կրակ են բացել Շուշիի բարձունքներում տեղադրուած ադրբեջանական դիրքերի վրայ։ Զինուորների ու ազատամարտիկների զրնդակոծութեան հետեւանքով նկատուել են հրդեհներ Շուշիի ծայրամասերում։ Միաժամանակ տեղի են ունեցել փոխհրաձգութիւններ Կրկժան թաղամասում, որի ժամանակ 2 ՕՄՕՆականներ սպանուել են, երկուսը գերեվարուել։

Առաւօտեան Խոջալուի կողմից հրթիռակոծուել է Նորագիւղը, կան աւերածութիւններ, 1 մարդ զոհուել է, 2ը՝ վիրաւորուել։

Նշուած դէպքերին զուգահեռ կրկին ակտիւացել են Մարտունու շրջանի ադրբեջանցիք, որոնք սկսուել էին ազատամարտիկների կողմից Խոջաւենդի խոցը վերացնելուց հետ։ Յարձակման դէպքեր են արձանագրուել մասնաւորապէս շրջկենտրոնից ոչ հեռու ընկած Ամիրանլար գիւղի կողմից։ Ադրբեջանցիք ըստ ամենայնի փորձում էին կրկին վերադառնալ Խոջաւենդ։

Պէտք է նկատել որ այսօր արդէն շօշափելի են այն ձեռքբերումները, որ ԽՍՀՄ զօրքի չեզոքութեան պայմաններում իր հաշին կարողանում է գրանցել հայկական կողմը։ Անշուշտ զգալի յաջողութիւն էր, օրինակ, անցած ամռանը Հադրութի գրաւեալ տարածքների գրեթէ ամբողջական յետ նուաճումը։ Արցախեան իրադարձութիւնների վրայ անշուշտ իր մեծ ազդեցութիւնն է ունենում քաղաքական այն ֆոնը, որ ծաւալւում է նախկին ԽՍՀՄի հանրապետութիւնների վարած ընդհանուր քաղաքականութեան եւ դէպի «կենտրոն» ունեցած նրան դիրքորոշման հետեւանքով։ Այսօր երբ նշեալ շրջագծում իրադարձութիւնները իրարից առաջ են ընկնում, օրուայ մէջ խախտւում են մշակուած քաղաքական հաշուարկները, հարկ է լինում սրա կամ նրա համար վերանայելու դեռ երեկ որդեգրած իր քաղաքական դիրքն կողմնորոշումը։ Անկասկած քաղաքական վերջին անակնկալն էր Խորհրդային Միութեան առանցքը կազմող 3 սլաւոնական հանրապետութիւնների կողմից նոր դաշինքի ստորագրումը։ Այս փաստը ակնառու կերպով անակնկալի էր մատնել նոյնիսկ հասուն քաղաքագէտ եւ «փափուկ» քաղաքական գծի կողմնակից Նազարբայեւին։

«ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՌԱՐ՝ ԴՈՒՆ ՇԱՏ ԱՊՐԵՑԱՐ»

Պատերազմ է իր բոլոր օրէնքներով ու դաժանութիւններով... Եւ հայ քաջորդիները իւրաքանչիւր Աստծոյ օր ապացուցում են վաղուց ի վեր ապացուցուածը՝ Հայրենիքը կ'ապրի, կ'ապրի քաջաց տուն Արցախը, որովհետեւ նրա որդիները գիտեն յանուն Հայրենիքի մեռնել։

Այս անգամ վահանի վրայ վերադարձաւ «Մեծն Տիգրան»-ի շտաբի պետ Տիգրան Ատրպետեանը։ Ստացած ծանր վէրքից յետոյ, Դեկտեմբերի 10ին, Երեւանի հիւանդանոցներից մէկում նա ընդմիշտ փակեց աչքերը՝ միանալով մեր հայրենեաց ազատամարտի տուրբ նահատակներին անմահ փաղանգին։

Ընտանիքի հայրը, համալսարանի ուսանող ու Երեւանի քաղխորհրդի պատգամաւորը կոչումով ընտրեալների մէջ էր՝ Հայրենիքի զինուոր, որոնց սրբազան արեան շնորհիւ է հողը դառնում Հայրենիք։ Մեծն Քաջ ու անվեհեր մարտիկը իր չորս ամսական որդուն Արգիշտիին աւանդեց հայրենի Արցախը պաշտպանելու մեծ խորհուրդը։ Այսպէս են ծնւում եւ այսպէս ԱՊՐՈՒՄ յաւերժ։